ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
«ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Արմավիր 31 հոկտեմբեր 2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Գրիգորյան
Հանձնաժողովի անդամներ՝ Պ. Տերտերյան, Ա.Հարությունյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Լ. Գրիգորյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին,
3. Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) գնահատման մասին
(Լ. Գրիգորյան)

Ընդունել ի գիտություն, որ համաձայն 28.10.2019թ-ին ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցները ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն, բացառությամբ **«ՊՐԻՄԱՎՏՈ» ՍՊԸ-ի**, որը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի 2000 /երկու հազար/ ՀՀ դրամ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություն:

Համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 47-րդ կետի, ինչպես նաև **«ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/09»** ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 7.17-րդ կետի՝ էլեկտրոնային եղանակով ծանուցվել է **«ՊՐԻՄԱՎՏՈ» ՍՊԸ-ին** և երեք աշխատանքային օրվա **ընթացքում մասնակցի կողմից ներկայացվել է շտկված փաստաթղթերը**:

ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/09 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում հանձնաժողովին է ներկայացվել սույն ընթացակարգին իրենց՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)՝ ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը:

Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից հրավերով սահմանված ժամկտում հանձնաժողովին ներկայացված սույն ընթացակարգին իրենց՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի II մասի՝ հայտը պատրաստելու հրահանգով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները)՝ ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագրերը, համապատասխանում է սույն ընթացակարգի հրավերով և գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջներին, ուստի հանձնաժողովը որոշեց.

Հ/Հ	Մասնակիցը	Չափաբաժինը
Ընտրված մասնակից ճանաչել՝		

ProTender©
www.protender.am

1	«ՊՐԻՄԱՎՏՈ» ՍՊԸ	1 -38,40-44,46-58
	«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ	39,45
	<u>երկրորդ տեղ գրաղեցնող ճանաչել՝</u>	
1	«ԱՐՊԱՆԻՎ» ՍՊԸ	1
	«ՊՐԻՄԱՎՏՈ» ՍՊԸ	39,45

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

3.<u>Պայմանագիր կնքելու որոշումը և անգործության ժամկետը հաստատելու մասին</u>
(Լ. Գրիգորյան)

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակել տեղեկագրում և անգործության ժամկետ սահմանել ծանուցման օրվան հաջորդող օրվանից հաշված 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>
(Լ. Գրիգորյան)

«ԱՔ-ԲՏ-ԳՀԱՊՁԲ-19/09» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ընտրված մասնակցիցների հետ պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող 3 աշխատանքային օրվա ընթացքում ՀՀ Արմավիրի մարզ, Արմավիրի համայնքապետարան ք.Արմավիր,Հանրապետության 32 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝0

Հանձնաժողովի նախագահ՝ Լ.Գրիգորյան

Հանձնաժողովի անդամներ՝ Պ.Տերտերյան,

Ա.Հարությունյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Է.Գրիգորյան

ProTender©
www.protender.am